ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594018
էլ. փոստ nune.khachatryan@justice.am

N _____
« ____» _____ 2017թ.

ՀԵՏՔ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԼՐԱԳՐՈՂ
ՍԵԴԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ղուկասյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին հասցեագրված Ձեր՝ 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 14542-18 գրության՝ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրվել են գրությամբ բարձրացված հարցերը, որոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանի՝ կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումներին: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 3-րդ հոդվածով տրված է «տեղեկություն» հասկացությունը, որից երևում է, որ պահանջվող տեղեկությունը չի ընդգրկում անձի մասնավոր կարծիքը որևէ երևույթի վերաբերյալ, իսկ հարցումը չպետք է ուղղված լինի որևէ մասնավոր անձի: Հետևապես, Ձեր հարցումը չի ընկնում վերը հիշատակված օրենքի գործողության տակ: Արտակ Զեյնալյանը կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի վերաբերյալ կարծիք հայտնելիս չի եղել գործադիր իշխանության ներկայացուցիչ և հայտնել է իր սեփական կարծիքը: Այժմ նա գործադիր իշխանության ներկայացուցիչ է և որպես արդարադատության նախարար ունի իր լիազորությունների ոլորտը:

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական դիրքորոշումը հանրությանը կարող է ներկայացվել տվյալ բնագավառում իրավասու գերատեսչության կողմից, որը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը չէ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆՈՒՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավական ապահովման վարչություն
Հեռ. (010) 59 40 68